

ՑԱՆ. ՄՐԱՍՍՈՒՆ. նշանակելով իր նուիրական, ճգնազգեցիկ կեանքը և կենաց յետին ժամը: Իսկ քառակուսի բրդան ծայրն ալ քիչ մը տաշելով՝ տնկել՝ ի գագաթը երկնաալաց սպիտակ սրտաձև սափոր մը ոսկի բոցով և ոսկի գծով նշանուած, զոր փափաքէի հայկակ, որ թէ ոչ այնքան մեծ, գոնէ այնքան փայլուն ըլլար՝ մինչև ուր որ ըլլայինք՝ կարենայինք տեսնել զայն և կարդալ ՍԱՀԱԿ:

Հ. Ղ. Մ. Ա.

Շնիկ աստեղն ընկերը:

Երկնից երեսն աստղ մը կայ քան զամէնը գեղեցիկ, աստղ մը որ քան զամէնն աւելի իրեն կը ձգէ մեր աշքն իր լուսոյն սպայծառութեանն ու շնորհափայլութեանն համար որով զարդարուած է, և որ այս օրերս մոտագիր զիտաղութեանց ու խորին մոտածութեանց առարկայ եղած է աստեղաբաշխից:

Ի՞ս աստղն, որ Այրիոս կամ Շնիկ անուամբ ամէնքն ալ կը ճանչնան, այնչափ հեռաւորութիւն ունի մեզմէ, որ մէկ միլիոն երեք հարիւր եօթանասունուիրեք անգամ աւելի է քան զայն որ կը բաժնէ մեզմէ զարեն. և որուն լցոն իւրաքանչիւր վայրկենի մէջ ընթանալով իրը տասն միլիոն աշխարհագրական մղոն՝ քսանուերկու տարի կ'ուզէ իրմէ մինչև մեզի հասնելու: Եւ սակայն այսպիսի մէկ անհուն հեռաւորութիւն մը, որ գոգցես մարդուս միտքը կ'ահացունէ, աստեղաբաշխ իրենց զօրաւոր դիտակներովը կտրեցին անցան, և այն անհունութեան խորէն այնպիսի գաղտնիք մը խլեցին ու դուրս հանեցին, որ կը կարծուէր թէ յաւետեան անծանօթ պիտի մնար:

Իհաւասիկ ինչէն սկիզբն առին դիտողութիւնքն: “Եղբ քննելու հետ

եր, կը գրէր անցեալները | ըվեռիկ աստեղաբաշխն առ պաշտօնեայն Պաղղոյ հասարակաց ուսման, Շնիկ աստեղ գարու մը ընթացից մէջ եղած բաղդատական դիտողութիւնները ըլլուն, հայկին և Երկաւորին համատեղութեանց աստղերուն հետ. Պէսէլայս աստեղ վրայ կը նշանակէր շարժումն մը մասնաւոր Ճօճման, և շատ որոշ. անբայցատրելի երեսոյթ մըն է այս, եթէ չենթադրուի թէ Շնիկ աստղն ենթակայ ըլլայ մեծազանդուած մարմնոյ մը ազդեցութեանն՝ որուն հետ կապեր են զինքն տիեզերական ձգողութեան օրէնքն: Իրդ այս ենթադրութիւնս այնպէս Ճիշդ կը բացատրէ այն երեւութիւն ամէն պարագաներն, որ մենք չենք կրնար չհաւատալ թէ այս ըլլայ Ճմարտին բացատրութիւնը: Եթէ մինչև ցարդ չկրցանք տակաւին գանել Շնիկ աստեղ այս խորհրդաւոր ընկերը, պատճառն այս է որ անիկայ երկրորդ արև մը չկազմեր ինքնալցոյս, ինչպէս են կրկնակ աստեղաց զրութիւնները, այլ է Շնիկ արևուն մեծազանդուած մօլորակ մը. որուն փոխ առած լցուր տկար ըլլալով չկրնար կտրել անցնիլ այն անհուն հեռաւորութիւնն ու գալ մինչև մեր աշքն հասնիլ: Ո՞եր տեսաբանական գործինները կատարելագործուելով գուցէ օր մը տեսնենք զայն. բայց թէ և չհամանք ալ գտնելու զայն, ժամանակաւ պիտի որոշնք իրեն կտրած պարունակը, պիտի ճշշդենք զանգուածն, ինչպէս նաև ներքին աստեղ զանգուածն, որուն չորս դին կը դաւնայ , :

| ըվեռիկի այս խօսքէն կը տեսնուի որ Շնիկ աստղը մեծ մտադրութեան նիւթեղեր է աստեղաբաշխից, բայց ուրիշ կողմանէ ալ անոր գաղտնիքը փարատելու համար, որով պատած են իր շարժմունքն, հարկ է դիտողութեան գործիններն այն աստիճանի կատարելութեան հասցունել, որ ալ փափաքելու տեղի չմնայ:

Իրդ պէտք է գիտնալ որ, ըստ կարծեաց Պէսէլի, Շնիկ աստեղ յատուկ

առժման մէջ դիտուած անկանոնու թիւններուն պատճառ կը համարուի քողութիւնն , զոր կ'ազդէ անոր վրայ և գիրմահար մեծ մարմին մը , որուն որս դին կը կատարէ այս լուսապայծառ սատղն իր յաւիտենական շրջանները : Ճգող մարմինը , կ'ըսէր մեծանուն ուղ լիչն ՝ Ի՞նիկսպէրկի դիտարանին , պէտք է գտնուի կամ շատ մօտ այն աստեղ որ իր յատուկ շարժմանցը մէջ զգալի փոփոխութիւններ կ'երեցունէ , կամ շատ մօտ մեր արեւուն : Ի՞այց այս վերջին դիպուածիս մէջ պէտք է ամենամեծ զանգուած մը ունենայ անիկայ , և չենք կրնար ըմբռնել թէ ինչպէս կ'ըլլայ որ այսպիսի վիթխարի մարմին մը , համեմատաբար ոչ շատ հեռու արեւէն , մեր դրութեան շարժմանցը վրայ խռովութիւններ չպատճառէ , զորոնք դիտողութիւնը ոչ երեք յայտներ է : Ուրեմն պէտք է հետեցունել որ ձգող մարմինը շատ մօտ ըլլայ այն աստեղ : Ի՞այց այս ենթադրութիւնս , թէպէտ և այնպիսի մեծանուն աստեղաբաշխէ մը առաջարկուած ըլլայ , շատ դժուարաւ ընդունելի եղաւ , մանաւանդ Շ դրուվէ , ոչ միայն երկբայութեան տակ ձգեց զայն , այլ նաև Պիէսէլի մահուանէն տարի մը ետև յորդորեց Ֆուս աստեղաբաշխը վինտելու Շ նիկ աստեղ վրայ տեսնուած անկանոնութեանց այս գաղտնի պատճառը : Ֆուսի ձեռք զարկած քննութեանց արդիւնքն , ինչպէս կը խորհէր Շ դրուվէ , բոլորովին հակառակ ելան Պիէսէլի առաջարկած ենթադրութեանն :

Ի՞այց մեծ երկասիրութիւն մը , զոր յամին 1851 ՚ի լոյս ընծայեց ՚Նէդէրս դանեցին , և քննութիւնքն որոնց իր կողմանէ պարապեր էր Շ ուպէրդ , ՚Նմերիկոյ ՚Միացեալ՝ ՚Ահանգաց ՚Նոռուղական Տարեցուցին հաշուողը , նորէն իրաւունք տալ կարծուեցան ՚Ի՞նիկսպէրկի աստեղաբաշխին : Ուստի քըննելով Շ նիկ աստեղ , Պիոկիոնի , Հայկայ ու ՚Յ աստեղաց ուղիղ ելից տարբերութիւններն , որ դիտուած են 1755 ամէն մինչև 1840 , և բաղդա-

տելով զանոնք Tabulae Regio montanae ըսուած աղիւսակաց հետ , ՚Նէդէրս չտարակուսեցաւ հետեցունելու թէ Շ նիկ աստեղ շարժման անկանոնութիւնքը կը բացատրուին ենթադրութեամբ թերագիծ պարունակի մը , զոր այն աստղը կը կատարէ դրութեան մը ծանրութեան կեղրոնին չորս դին , որ դրութիւնը կը կազմուի այն աստղէն և ընդդիմահար արբանեկէ մը , որ անբաժան է իրմէ իր յաւիտենական ընթացից մէջ , զոր կը կատարէ միջոցին անհնութիւնը չափելով : ՚Նանեաց դիտարանին իմաստուն ուղղին ուղեց մանաւանդ աւելի առաջ մղել իր աշխատութիւնն , և որոշել այս լուսապայծառ աստեղ կտրած պարունակին բնութիւր . դտաւ որ անոր մէկ շրջանը դրութեան ծանրութեան կեղրոնին չորս դին կը կատարուի յիսուն տարուան մէջ , թերագիծին արտակեդրութիւնն այնպիսի է՝ որ եթէ մեծագոյն առանցքն ըլլայ հինգ , փոքրագոյն առանցքը կ'ըլլայ երեք , և ձեռնհաս եղաւ որոշելու թէ 1791 կամ 1792 տարին եղած պիտի ըլլայ Շ նիկ աստեղ ստորին աղեղնագծէն անցից ժամանակը : ՚Ն երջապէտ ՚Նէդէրսի տուած տարագով , այս ընդդիմահար արբանեկին զանգուածը կ'ըլլայ գոնեա Շ նիկ աստեղ զանգուածոյն քառորդին հաւասար :

՚Նյու բանս պէտք չէ զարմանք բերէ : ՚Իրաւ է որ մեր մոլորակային դրութեան մէջ այսպիսի բան չենք տեսներ , վասն զի մեր մոլորակաց մեծագոյնը , որ է ՚Ն ուսընթագն , հազար քառասունութ անգամնուազ քան զարկանգուած ունի . բայց այս ըսել չէ թէ այն բազմաթիւ արեւային դրութիւններէն , որ ցրիւ սփուռած են բոլանդակ արարչութեան մէջ , ըլլան այնպիսիներ ալ , որոնց մէջ մէկ կամ շատ մոլորակաց զանգուածը քիչ տարբերի ձգողութեան յատուկ կեղրոնին զանգուածէն : ՚Նյու ատեն այս արևեներն ալ անշարժ չեն մնար նկատմամբ մոլորակային յատուկ դրութեան մարմիններուն , ինչպէս կը պատահի մեր դրու-

թեան մէջ, որուն վրայ մոլորակաց վերբերական փոքրութիւնը չկրնար զգալի ազդեցութիւն մը ընել, այլ կոր գիծ մը կը կտրեն ընդհանուր դրութեան ծանրութեան էերոնին չորս դին, որ այս դիպուածիս մէջ քիչ հեռու կը գտնուի այսպիսի լուսաւոր աստեղաց ծանրութեան էերոնին :

Ի՞ս ենթազրութիւնը լոկչ որ իրաւունք կու տայ երեւութիս : Տիւպոա աստեղաբաշխն առանց համարելու այնպիսի մնորակներու գոյութին, որոնց զանգուածը գրեթէ հաւասար ըլլայ իրենց ձգողութեան կեդրոնիցը զանգուածոցն (որ գուցէ հակառակ կրնայ ելլել դրութեանց տիեզերազրութեանը), բաւական կը սեպէ ենթազրել որ Ընիկ աստղն իր տեղափոխութեան ընթացիւքը միջոցին ընդարձակութեան մէջ, մտած ըլլայ մեծամարմին խաւար աստեղ մը ձգողութեան շրջասահմանն առ որ կը ծանրի հիմա : Ի՞նչոյս զանգուածոց գոյութիւնը տիեզերաց մէջ անկարելի բան մը չէ . նոյն իսկ լարա աստեղաբաշխն այս կարծիքէն էր : Ի՞ս մարմիններս հաւանականաբար շինեալ արեներ են, որ միջոցին մէջ կը ծանրին և կը շարունակեն ըլլալու ձգողութեան կեդրոնք, և անտարակոյս կը պատէ անոնց ալ չորս դին մոլորակաց տիրական խումբ մը : Ի՞նչոյս աստեղք, անջերմ աստեղք, ուր ամէն կեանք վերջացեր են, ուր ամէն ծնունդք լմբնցուցեր են իրենց շրջանը, զոր Աստուածսահմաներ էր, կը սպասեն այն ժամանակին, յորում ձգողութեան փոփոխութիւնն 'ի տիեզերական վանողութիւն՝ թոյլ տայ լուծման և քայլայման երկնից այս վիթխարի դիականցն, ու զիրենք կազմող մանրամասունքը սրփուէ երկնից խորեցը, մինչև վերադառնայ նոր փոփոխութիւն մը՝ վանողութեան ՚ի տիեզերական ձգողութիւն՝ նորէն սանձելու զանոնք ու նոր արեներ և նոր մոլորակներ կազմելու : լասն զի եթէ հոս այս աշխարհիս վրայ ամենայն ինչ կը ծնանի, կ'ապրի ու կը մեռնի, այս ընդհանուր օրէնքը

պէտք է ըլլայ սովանդակ տիեզերաց մէջ, և արևներն ալ պէտք է որ վերանորոգին նման ծառոց տերեւոցն : Ի՞ս ենթազրութիւններն, զորոնք թէպէտ յետագայ գործք ըստ մասին անձիշդ ալ ցուցած ըլլան, անոր համար յիշատակեցինք, որպէս զի ընթերցողք հարեւանցի տեղեկութիւն մը ունենան կարեւոր գիւտիս ամբողջ պատմութեանն :

Ի՞սոր համար պէտք է յիշենք նաև որ հոռվմայեցի աստեղաբաշխը . Պալանտրէլի վարդապետը, Համոզուելով Ինդէրսի առաջ բերած փաստերուն, որով կը հաստատէր գաղտնի մոլորակի մը գոյութիւնն, ընդարձակ երկասիրութիւն մը ներկայացուց անցեաները Ինարիզու գիտութեանց Ճեմարանին, ուր կը ջանար ցուցընելու թէ Ընիկ աստեղ ուղիղ ելից վրայ տեսնուած պարբերական փոփոխութիւնները կրնան կատարելապէս բացատրուիլ տալով նոյն աստեղ յատուկ շարժումն մը :

Խակ թէ և լըվէռիէի միսիթարական խօսքէն յոյս առած, որ կ'ըսէր թէ գիտութիւնը տեսաբանական գործեաց հետզեակ կատարելագործուելովը գուցէ օր մը կարող ըլլայ գտնելու այս գուշակեալ մոլորակը . աստեղաբաշխներէն շատերը սրտերնին հանդարտեցուցին, և համարեցան թէ այսպիսի գեղեցիկ աշխատութիւնք ոչ երբէք բարեյածող գիւտով մը կրնան պըսակուիլ : Ինչուան եղան որ հաւանականութեան հաշուի տակ ձգեցին այս գիւտը, և գտան որ Ընիկ աստեղ մեզ մէ ունեցած անհուն հեռաւորութեամբ անդրադարձեալ լուսով փայլող մոլորակ մը տեսնելու համար, այնպիսի գիտակ մը պէտք է որ գոնէ 46,000 անգամ մեծցունէ առարկաներն, ուր մինչև հիմա եղած զօրաւորագոյն գիտակներն հազիւ 6000 անգամ կը մեծցունեն :

Ի՞սայց իմաստնագունից խորհուրդներն իսկ յաճախ սխալական են, և պակասաւոր իրենց վարդապետութիւնը : Ո՞ինչդեռ յարոպա ենթազրու-

թիւնները կը բազմապատկուէին, և աշուտի տակ կը ձգուէր այս գիւտիս ու ազ կամ ոցինչ հաւանականութիւնն, Կմերիկա զբօսասէր աստեղաբաշխ մը զատկերահանն, Պալէրը անունով, բո՞լը զիտնական աշխարհին մէջ զարմա՞ալի լուրը տարածեց թէ Շնիկ սստեղ խորհրդաւոր ընկերը գտնուեցաւ : Խճն էր գտեր զայն 18 բութ առարկական ունեցող դիտակաւը, թէ և անոր հեռաւորութիւնը գլխաւոր աստղէն 10 մանրերկրորդ ըլլար : Ի՞ս լուրս սկզբան շատ հաւատալի չեղաւ, այնչափ որ Բաէդէրս, բնական հայրն այս նորագիւտ աստեղս, չէր ուզեր հանչնալ զայն իրք իրենն, որուն կան խաւ գուշակեր էր զօրաւոր գոյութիւնը : Բայց դիտողութիւնք, ինչպէս դիւրին է երեակայել, այնչափ բազմապատկուեցան որ շուտ մը ուրիշ աստեղաբաշխք ալ տեսան զայն, և ասոնց մէջ երկու երեւելագոյնք, Պոնտ անգլիացին և Շագունագ գաղղիացին : Ո՞իայն Բարիզ, ուր կը բնակի վերջինս, շատ դիւրին չեղաւ այս զիւտիս յաջողութիւնը . պատճառն են մասամբ տեսաբանական գործիք, կամ մանաւանդ թէ երկինքն՝ որ շատ ձեռնտու չեն այսպիսին նուրբ և գժուարին դիտողութեանց : Լովեռիէի հրաւիրանօքը ձեռք զարկաւ, Ֆուգոյի և ուրիշ բազմաթիւ տառեղաբաշխից հետ, Շագունագ զինելու Շնիկ աստեղ գէմ առաջնոյն հըսկայածն հեռադիտակն, որ աւելի քան դ80 հարիւրորդամէջը տրամագիծ ունի, և ուշի ուշով դիտեցին շատ օր անդուլ առանց տեսնելու այն ցանկալի աստղիկն . երբ վերջապէս անցեալ մարտի 20ին մինչ Շագունագ հեռադիտակին աշամերձին աչքը դրեր ու մտադիր կը դիտէր, տեսաւ որ Շնիկ աստեղ յորդաբուղին լուսոյն ճառագայթումն յանկարծ նուազեցաւ, իբր թէ զայն կազմող ճառագայթներն իրենք իրենց վրայ կ'ամփոփուէին ու աստեղ վրայ կը կեդրոնանային, և շուտ մը անոր խճնդրեալ ընկերը տեսանելի եղաւ : Շնիկ աստղէն անոր ունեցած հեռաւորւ-

թիւնն էր 10^ակ և զրից անկիւնն էր 85⁰: Տեսանելիութիւնը կէս ժամէն աւելի չտեղեց, ետքէն լուսոյ ձառագայթումը նորէն անյայտ ըրաւ զայն: Այս նոր աստղիկը վերջէն տեսան նաև Վիշմարիչ՝ լի պի աստեղաբաշխը, և Ա'աղաս՝ լատէլ աստեղաբաշխը:

Իսկ Բ'էդէրս առաջին կարծիքը փոխելով ըստ թէ ամէն քան խորհրդածելով վերջէրս գտնուած նոր աստղը շատ կարելի է որ Շնիկ աստեղը ընկերն ըլլայ. որուն Պիէսէլ առաջին անգամ գուշակեց խորհրդաւոր գոյութիւնը, և ինքն հաշուեց պարունակնու զանգուածը: Ա ամս զի գրութեան անկիւնքն 83⁰ և 86⁰ զոր դիտեց Շագունագ 20 և 25 մարտի, ըստ բաւականին կը միաբանին Շնիկ աստեղ պարունակին հետ, զոր Բ'էդէրս հաշուեց, ուստի արգելք մը չկայ որ նոյնը ըլլայ: Այս բանիս համոզուեցաւ նաև լովեսիէ, որ չուզեց հրատարակել մէկէն Շագունագի դիտողութիւններն, յառաջ քան ստուգելու խիստ հաշուով զրից զուգընթացութիւնը՝ դիտուած աստեղ և ենթաղրական աստեղ զոր երեակայեց Բ'էդէրս անուանի աստեղաբաշխն Ալդոնայի: Ա երջապիս ամերիկացին Աէֆֆըլրդ և Վիշմանիկապէրկի աստեղաբաշխն Ասովէրս լմընցունելով մի և նոյն ժամանակը Շնիկ աստեղ դիտեալ խոտորմանց քննութիւնը, Պիէսէլի և Բ'էդէրսի հետեւանացն հասան նկատմամբ այն աստեղ ընկերակցին, գտնելով իրենք ալ որ անոր շրջանին ժամանակը կը կատարուէր յիսուն տարուան մէջ, և հաշուով որոշուած անոր զրից անկիւնը կը համաձայնէր նոր գտնուած աստեղ դիտուած զրից անկէանն հետ: Հետայս ամէն քննութեանց նոր գտնուած պղտի աստեղ նոյնութիւնն հաշուով ենթաղրուածին հետ, որ առ ժամանակ մը տարակուածի տակ ընկաւ, զրեթէ ամէն աստեղաբաշխներէն ընդունելի եղաւ, և միայն երկու տարի բաւական են որ այս բանս ամէն կարելի վիճէ զերծ ըլլայ:

Ի՞այց կ'երեայ թէ բանն ինչուանն հոս կանկ պիտի չառնու : Վայն Պուլէրս աստեղաբաշխը ծանոյց որ և աստեղ Հիդրային, Հասկին, Լուսին և Յ աստեղ Հայկայ՝ դիտուած դրից քննութիւնն իրեն ժխտական արդիւնք մը տուեր են, բայց ընդհակառակն Պրոկիոնի ուղիղ ելքն և խոտորմունքն 1750 ամէն մինչև 1860 դիտուած, իրենքանի մը անկանոնութիւններ յայտնեցին, որոնք միայն կը մեկնուէին այս աստեղ ալ ընկեր մը չնորհելով, ինչպէս Ընիկ աստեղ տրուեցաւ :

Վաւցէ ժամանակաւ պիտի գտնուի նաև Պրոկիոնի արբանեակն, ինչպէս Ընիկ աստեղը գտնուեցաւ : Պագայն պիտի տայ այս առաջարկութեանս ալ լուծումն . իսկ ներկայապէս թէ և այս գիւտն իր առաւելութիւնը քիչ մը կորսընցուց երբ գիտցուեցաւ թէ խնդիրն աստեղ մը վրայ է եղեր և ոչ թէ մոլորակի մը, որովհետեւ մէկ մըն ալ աւեցաւ արդէն ըստ բաւականին մեծ թիւը կրկնակ աստեղաց, 'ի վերայ այսր ամենայնի գիտութիւնը փառաւոր քայլ մըն ալ առաւ . այս կրկնակութիւնն ոչ եթէ դիպուածով կամ տեսաբանական զօրաւոր գործեաց օգնականութեամբը գտնելով, ինչպէս առաջներն, այլ մըտաց խորին աշխատութեամբն : Ուրեմն ասիկայ ալ այնպիսի գիւտ մըն է որ մեծ պատիւ կը բերէ մարդկեղէն մատաց, հաւասար Պիոսիդոն մոլորակին գիւտին, որ Ուրանոսի ընթացից շիփոթմանց քըննութեանն արդիւնքն է, և կը ցուցընէ թէ որչափ ալ արուեստը կատարելագործէ դիտողութեան միջոցները, մարդուս միտքը միշտ քայլ մը առաջ կ'անցնի քան զզօրաւորագոյն գործիս աստեղաբաշխութեան :

Բարելացոց պետորքեան կառավարութիւնը, սովորութիւնքն ու կրօնքը:

Պորեստանեայց և Վաղգէա-Վարելացոց պետութեանց ինչպէս ձեւանալուն վրայ ամենեին ծանօթու-

թիւն չկայ : Խակզբան թագաւորին իշխանութիւնը բացարձակ էր . և թագաւորն թագաւորաց՝ ինչպէս որ կոչուած է, պալատին մէջ կը նստէր, որ միանգամայն միջնաբերդ էր և Պատմակ'ը կ'ըսուէր : Հոն բազմութիւն պատականաց կը գտնուէին թագաւորին քով, որոնց մէջ կարգով առաջին էին ներքինիք . ներքինապետը ընդհանուր հակողութիւն կ'ընէր բոլոր արքունեաց մէջ ապրովներուն վրայ . պատերազմի մէջ թագաւորին հետ կ'ըլլար, ինչպէս նաև քրմապետը և բոլոր արքունիքը, միանգամայն և կանայք : Ընդունեաց մեծամեծ իշխանաւորներէն կը սեպուէին նաև պալատին վերակացուն և պահապանապետը : Պաշտօնէից ժողովք մը՝ որուն մէջն էին հաւանականաբար այս անձինքն ալ, կ'ուղղէր տէրութեան կառավարութիւնը : Ծխագաւորը մը տրնջենաւոր նախագահ էր այս ժողովքին . ետեւէն կու գային դասակարգութեամբ թագաւորին երկրորդը, երրորդը, և այլն :

Պետութիւնը գաւառ գաւառ կամ այլ և այլ նախարարութիւն բաժնուած էր, յորս կը հրամայէին քաղաքաբետք և իշխանք, որ իրենց պատուանուններուն, աստիճանացն ու պաշտօնիցն համատ կը զանազաննեին ըստ կարգի իրարմէ, որոնք նաև երբեմն երկու իշխանութիւն՝ այսինքն զինուորականնութեամբ մէկէն կ'ունենային :

Վախարարաց գլխաւոր պարտքերէն մէկն էր հարկահանութիւն ընելուակ կամ բնական բերք առնելով ուսկից նախ իրենց ալ մաս կը հանէին : Ուեծ դատաւոր մը և ընդհանրական հոգաբարձու մը առընթերակայ էր քովերնին . ասոնցմէ ետեւ կային բազմութիւն մը դատաւորաց և ստորակարգեալ պաշտօնէից, որոնք գաւառաց այլ և այլ մանր բաժանմունքներուն մէջ ցըուած էին : Վայս դասակարգութեանէս ստորին՝ կար տեղական գործակալ մ'ալ, որ չեր կրնար բան մը գործել առանց հաւանութեան ժողովքի մը,